

**ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ**

**ԱՍՏՈՒԾ ՀԱՄԱՏՅԵԱԼՆԵՐԸ ԿԸ ՓՐԿԷ ԻՐԵՆՑ ՓՈՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

1.- Ձեզի մարդկային փորձութենէն գատ ուրիշ բան չէ պատահած, բայց Աստուած հաւատարիմ է, որ ձեզ պիտի չթողու, որ ձեր կարողութենէն աւելի փորձուիք, հապա փորձութեանը հետ ազատութեան միջոց մըն ալ պիտի տայ, որպէսզի կարող ըլլաք համբերել (Ա. Կորնթացիս 10:13):

2.- Ուստի, եղբայրներ, բանի որ Աստուած ա՛յնքան ողորմած եղաւ մեզի հանդէպ կ'աղաչեմ, որ դուք ձեզ Աստուծոյ ընծայէք, որպէս կենդանի գոհ մը իրեն վերապահուած, որովհետեւ ատիկա՛ է Աստուծոյ ուզած հոգեւոր պաշտամունքը (Հռոմ 12:1):


3.- Տէրը գիտէ աստուածապաշտները փրկել իրենց փորձութիւններէն (Բ. Պետրոսի 2:3):

Երանի՛ այն մարդուն, որ կը տոկայ փորձութեան, որովհետեւ փորձութենէն յաղթական դուրս եկողը, որպէս մրցանակ պիտի ստանայ այն կեանքը, որ Տէրը խոստացաւ տալ զինք սիրողներուն: Բայց փորձութեան մէջ եղող ոեւէ մէկը թող չըսէ, թէ Աստուած է, որ զինք կը փորձէ, որովհետեւ Աստուած մասնակից չէ փորձութիւններուն, որոնք չարէն կու գան, ո՛չ ալ ինք մարդիկը փորձութեան կ'ենթարկէ: Իւրաքանչիւր մարդ կը փորձուի իր իսկ ցանկութիւններէն տարուելով ու խաբուելով:

Կարդալ նաեւ՝ Յակոբոս 1:2-18

**ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ**

**ԳԵՂԱՐԴ**



Սրբութիւն մը, որ կը գտնուի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գանձատան մէջ: Գեղարդը սրածայր երկաթեայ այն նիզակն է, որ Քրիստոսի խաչելութեան պահուն հոռմէացի զինուոր մը Անոր կողը խրեց: Յովհաննէս Աւետարանիչ վկայելով այս դէպքը կ'ըսէ.- «Ձատկի նախորդ օրն էր: Հրեայ դեկավարներ չուզեցին, որ մարմինները խաչին վրայ մնան Շաբաթ օրով, բանի այդ Շաբաթը տօնական մեծ օր մըն էր: Ուստի Պիղատոսէն խնդրեցին, որ խաչեալներուն սրունքները կտրուեն եւ մարմինները մէջտեղէն վերցնեն, Զինուորները եկան եւ առաջինին սրունքները կտրեցին, նոյնպէս ալ միւսին՝ որ Յիսուսի հետ խաչուած էր: Բայց երբ Յիսուսի եկան, տեսան որ անիկա արդէն իսկ մեռած էր, ուստի չկտրեցին անոր սրունքները: Սակայն զինուորներէն մէկը նիզակը անոր կողը խրեց, եւ անիջապէս արիւն ու ջուր հոսեցաւ» (Յովհ. 19:31-35):

â Արդարեւ Քրիստոսի արեամբ օծած այս սրբութիւնը կ'ենթադրուի, որ Թադէոս Առաքեալ իրեն հետ բերաւ Հայաստան՝ իր նուիրական առաքելութիւնը կատարելու ընթացքին:

**ՃՐԱԳ ԸՄԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- facebook-ի էջ Jerak ճրագ թերթ**  
**ՃՐԱԳ-ը կը պատրաստէ՝ Սարգիս Ա. Քեկյ. Սարգիսեան**



**ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ**



ԲՈՒ ԽՈՍԹԻ ԽՆ ՈՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՆ ԸՄԻՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ՃԶ. ՏԱՐԻ **ԿԻՐԱԿԻ, 25 ՅՈՒՆԻՍ 2023** ԹԻՒ 26

**ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ**

Եւ. 1.21-31: Յռ. 7.25-8.11 Մտ. 12.38-45

**ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՄԵՏԱՐԱՆԸ**

**ԸՍՏ ՄԱՏԹՔՈՍԻ 12.38-45**

Այն ատեն օրէնքի ուսուցիչներէն եւ փարիսեցիներէն ոմանք ըսին Յիսուսի. «Վարդապէ՛տ, կ'ուզենք, որ հրաշք մը գործես»:

Յիսուս անոնց պատասխանեց. «Աստուծոյ անհաւատարիմ չար սերունդ: Նշան մը կ'ուզէք, բայց Յովնան մարգարէին պատահած հրաշքէն գատ ուրիշ նշան պիտի չտեսնէք: Եւ ինչպէս Յովնան երեք օր ցերեկ ու գիշեր կէտ ձուկին փորին մէջ անցուց, նոյնպէս ալ մարդու Որդին երեք օր ցերեկ ու գիշեր պիտի մնայ երկրի ընդերքին մէջ: Դատաստանի օրը Նինուէցիները ձեզի դէմ պիտի ելլեն եւ դատապարտեն ձեզ, որովհետեւ անոնք Յովնանի քարոզութեամբ զղջացին իրենց մեղքերուն համար: Եւ ահա, Յովնանէն աւելի մեծ մէկը կայ հոս: Դարձեալ, դատաստանի օրը հարաւի թագուհին պիտի ելլէ եւ դատապարտէ ձեզ, որովհետեւ ան իր հեռաւոր երկրէն եկաւ Սողոմոնի իմաստուն ուսուցումները լսելու համար: Եւ ահա, Սողոմոնէն աւելի մեծ մէկը կայ հոս:

«Երբ չար ոգի մը դուրս կ'ելլէ մարդու մը մէջէն, կ'երթայ եւ անջրդի վայրեր կը շրջի՝ հանգիստ տեղ մը գտնելու համար: Եւ երբ չգտնէ, ինքնիրեն կ'ըսէ. "Ելլեմ երթամ իմ տունս, ուրկէ ելայ": Ուստի կը վերադառնայ իր նախկին տունը եւ զայն կը գտնէ պարապ, մաքուր եւ յարդուած: Ապա կ'երթայ եւ կը բերէ իրմէ աւելի չար եօթը այլ ոգիներ, որոնց հետ ներս մտնելով՝ կը բնակի հոն, որով այդ մարդուն վերջը իր նախկին վիճակէն շատ աւելի գէշ կ'ըլլայ: Գիտցէք, որ նոյնը պիտի պատահի նաեւ այս չար սերունդին»:

**Հ Ա Ւ Ա Տ Ք**

Հաւատք, բարի կրօնական առումով, կը նշանակէ ամուր վատահոյսիւն աստուածային ճշմարտութիւններու վրայ: Իսկ Պօղոս Առաքեալ այսպէս կը սահմանէ հաւատքը.- «Յուսացուած բաներուն հաստատութիւնն է եւ չտեսնուած բաներուն ապացոյցը կամ ստուգութիւնը» (Եբր. 11.1):

